Արձանագրություն N 4
ՀՀ ՈԿ ԳՀԱՊՁԲ-21/9 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 08 հուլիսի 2021թ
ժամը 14:15

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Է.Հակոբյանը
անդամներ՝ Հ. Մարգարյանը, Ա. Սարգսյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

I. Հայտերի գնահատման արդյունքների մասին

(Է.Հակոբյան)

1. Ընդունել ի գիտություն, որ «ՎՈԼՏ 1999» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում հանձնաժողովին է ներկայացրել առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագրերում արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները:
Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը տրամադրվել են հանձնաժողովի անդամներին:

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց մասնակցի կողմից ներկայացրած շտկված փաստաթղթերը և արձանագրեց, որ մասնակցի կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

II. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների ամփոփման մասին

(Է.Հակոբյան)

3. Գնահատող հանձնաժողովը հաշվի առնելով, որ մասնակիցների կողմից 2-րդ, 6-րդ, 9-րդ չափաբաժինների համար առաջարկված գները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները և նիստին ներկա չեն մասնակիցների գների նվազեցման բանակցությունների համար լիազորված ներկայացուցիչները, որոշեց.
ա/ կասեցնել նիստը ՀՀ ՈԿ ԳՀԱՊՁԲ-21/9 ծածկագրով գնանշման հարցման հրավերի 8.6 կետի համաձայն՝ 2-րդ, 6-րդ, 9-րդ չափաբաժինների համար առաջարկված գները այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները գերազանցելու հանգամանքով պայմանավորված:
բ/ ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու համար ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցներին ծանուցել գների նվազեցման շուրջ բանակցություններ վարելու համար:
գ/ գների նվազեցման շուրջ բանակցություններ վարելու և ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների ամփոփելու նպատակով գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել 2021թ. հուլիսի 13-ին ժամը 14.30-ին ք. Երևան, Ծովակալ Իսակովի 29, «գնումների խումբ» աշխատասենյակ հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Է.Հակոբյան

անդամներ՝ _____ Հ. Մարգարյան

_____ Ա. Սարգսյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան